https://doi.org/10.46991/S&L/2021.91.086

# ՀԱՅՑԱՅԻՆ ՎԱՂԵՄՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԻ ԸՆԴՀԱՏՈՒՄԸ՝ ՊԱՐՏՔԻ ՃԱՆԱՉՈՒՄԸ ՎԿԱՅՈՂ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՎ

**Քրիստինե Գաբուզյան**
*ԵՊՀ քաղաքացիական իրավունքի ամբիոնի ասպիրանտ*

Հայցային վաղեմության ինստիտուտը ստիպում է հետևողական լինել իրավունքների պաշտպանության հարցում և ժամանակին դիմել հարկադիր միջոցների կիրառությանը: Սակայն, նման շտապողականությունը, մանավանդ բարդ, բազմափուլ գործարար հարաբերությունների դեպքում կարող է ձեռնտու չլինել իրավահարաբերության կողմերին. դիցուք՝ ոչ միայն պարտապանը կարող է շահագրգռված լինել իր դեմ հայց չներկայացվելու հարցում և ճանաչել պարտքը, այլև պարտատերը կարող է շահարգրգռվածություն ունենալ, օրինակ, լավ գործարար հարաբերություններ պահպանելու ցանկությունը կամ նույնիսկ անհրաժեշտությունը:

Այդ հանգամանքը նկատի ունենալով՝ Քաղաքացիական օրենսգիրքը նախատեսում է պարտավոր անձի կողմից պարտքի ճանաչումը վկայող գործողություններ կատարելով հայցային վաղեմության ժամկետի ընթացքն ընդհատելու հնարավորություն (ՔՕ հոդված 340):

Պարտքի ճանաչման ինստիտուտը լավ մեխանիզմ է ցանկության դեպքում հայցային վաղեմության ինստիտուտի հետևանքները շրջանցելու համար, միևնույն ժամանակ նաև ճկուն՝ նկատի ունենալով պարտքի ճանաչում համարվող գործողությունների լայն շրջանակը և պարտքի ճանաչմանը, ի համեմատ, օրինակ, գործարքների, ներկայացվող պահանջների համեմատաբար քիչ կոշտությունը: Բացի այդ, հաշվի առնելով նաև պարտքի ճանաչման հետ կապվող իրավական հետևանքը՝ հայցային վաղեմության հոսքի վերսկսումը, այն նաև ռիսկերից ապահովագրող մեխանիզմ է (պարտատիրոջ մոտ վստահություն է ձևավորվում, որ կստանա բավարարում անգամ տևական ժամանակ իրավունքի պաշտպանությանն ուղղված գործողություններ չկատարելու դեպքում, իսկ պարտապանն էլ իր հերթին կարող է վստահ լինել, որ միաժամանակ դատական գործընթացների մեջ չի ներքաշվելու և չի կրելու դատական ծախսեր):

Պարտապանը, որը ճանաչում է իրավունքը, չի պահանջում վաղեմությամբ տրամադրվող պաշտպանությունը: Մյուս կողմից պաշտպանություն պետք է շնորհվի պարտատիրոջը, որը կարող է հենվել պարտապանի ճանաչման վրա և ձեռնպահ մնալ հայց հարուցելուց: Այս իրավիճակում պարտատիրոջ անգործությունը այլևս չունի այն նույն կշիռը, մասնավորապես՝ պարտապանի ցանկացած սպասումների նկատմամբ, որ հարցը համարվում է փակված: Բացի այդ՝ պարտապանի ճանաչումը նվազեցնում է հայցի հետ կապված ցանկացած անորոշությունը[1]:

Միջազգային փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ երկրների մեծամասնությունն ամրագրում է պարտքի ճանաչման՝ հայցային վաղեմության ժամկե-

[1] Տե՛ս Principles, Definitions and Model Rules of European Private Law, Draft Common Frame of Reference (DCFR), Articles and Comments [Interim Edition, to be completed], prepared by the Study Group on a European Civil Code and the Research Group on the Existing EC Private Law (Acquis Group), https://www.ccbe.eu/NTCdocument/DCFRpdf1_1262861061.pdf, էջ 542, 543:

տի հոսքն ընդհատող-վերսկսող ազդեցությունը[1]:

«Պարտքի ճանաչումը վկայող գործողություններ» կատեգորիան որպես վաղեմության ընդհատման հիմք հավաքական է և ներառում է հնարավոր դեպքերի մեծ քանակություն[2]: Իրավաբանական գրականության, դատական պրակտիկայի, միջազգային իրավական ակտերի և օտարերկրյա օրենսդրության ուսումնասիրությունը թույլ է տվել առանձնացնել այն հիմնական գործողությունները, որոնք որակվում են որպես պարտքի ճանաչում: Մասնավորապես, որպես այդպիսիք դիտվում են իրավազոր անձին նախնական կամ մասնակի վճարում կատարելը, տոկոսներ վճարելը, ապահովում տրամադրելը[3], պարտապանի կողմից պարտքի գրավոր հաստատումը, պարտապանի կողմից կրեդիտորին պարտքը մարելու պարտավորությամբ երաշխիքային նամակներ հանձնելը, փոխադարձ հաշվարկների ակտը ստորագրելը, պարտապանի լիազորված անձի կողմից պայմանագրի փոփոխությունը, որից հետևում է, որ պարտապանը ճանաչում է պարտքի առկայությունը, և հավասարապես պարտապանի խնդրանքը պայմանագրի նման փոփոխության մասին (օրինակ՝ վճարումը հետաձգելու կամ տարաժամկետելու մասին, պարտապանի կողմից կրեդիտորի պահանջի հիմնավորվածությունն ընդունելը, լրացուցիչ պարտավորությունների կատարումը[4], հաշվանց կատարելու առաջարկը[5], պարտապանի փորձերը պարտատիրոջ հետ համաձայնեցնելու պարտքը մարելու գրաֆիկը, հաշտության համաձայնություն կնքելու մտադրության մասին կողմերի գրագրությունը կամ նույնիսկ անհատական իրավական ակտի նախագիծը[6], ցանկացած այլ գործողություն, որը թույլ է տալիս հաստատել, որ պարտապանը ճանաչել է իրեն կրեդիտորի նկատմամբ պարտավոր[7]):

Ինչպես տեսնում ենք, պարտքի ճանաչումը վկայող գործողությունները բազ-

---

[1] Տե՛ս Ֆրանսիայի քաղաքացիական օրենսգրքի 2248-րդ հոդվածը, https://www.legifrance.gouv.fr/ https://archive.org/stream/codenapoleonorf00spengoog/codenapoleonorf00spengoog_djvu.txt: Հունգարիայի քաղաքացիական օրենսգրքի 6:25-րդ հոդվածի 1-ին մասի ա) կետը, https://www.ilo.org/dyn/natlex/docs/ELECTRONIC/96512/114273/F720272867/Civil_Code.pdf: Լեհաստանի քաղաքացիական օրենսգրքի 123-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը, https://supertrans2014.files.wordpress.com/2014/06/the-civil-code.pdf: Լիտվայի քաղաքացիական օրենսգրքի 1.130-րդ հոդվածի 2-րդ մասը, https://wipolex.wipo.int/ru/text/202088:

[2] Տե՛ս Сделки, представительство, исковая давность: постатейный комментарий к статьям 153–208 Гражданского кодекса Российской Федерации, отв. ред. **А. Г. Карапетов**, комментарии к статье 163, пунктам 1, 3, 4 статьи 165, статьям 171, 172, 175–177, 202–205 ГК РФ – **Павлов А. А.**, М., Изд. М-Логос, 2018, 1264 с., էջ 1227:

[3] Տե՛ս Վրաստանի քաղաքացիական օրենսգրքի 137-րդ հոդվածը, https://matsne.gov.ge/ru/document/download/31702/75/en/pdf, Եվրոպական մասնավոր իրավունքի մոդելային կանոնների III.–7:401-րդ հոդվածի 1-ին մասը, Հայցային վաղեմության մասին ՄԱԿ-ի 1974 թվականի կոնվենցիայի 20-րդ հոդվածի 2-րդ մասը:

[4] Տե՛ս Сделки, представительство, исковая давность: постатейный комментарий к статьям 153–208 Гражданского кодекса Российской Федерации, отв. ред. **А. Г. Карапетов**, комментарии к статье 163, пунктам 1, 3, 4 статьи 165, статьям 171, 172, 175–177, 202–205 ГК РФ – **Павлов А. А.**, М., Изд. М-Логос, 2018, 1264 с., էջեր 1227-1228:

[5] Տե՛ս Гражданское право, учебник, переработанное и дополненно, том 1, под редакцией **А. П. Сергеева, Ю. К. Толстого**, М., 2005, էջ 373:

[6] Տե՛ս **Григорьев М., Гаспарян А.**, Перерыв течения срока давности: пять критериев, которые указывают на признание долга, Журнал "Арбитражная практика", https://www.vegaslex.ru/analytics/publications/interruption_of_period_of_limitation_five_criteria_which_indicate_the_acknowledgement_of_the_debt/:

[7] Տե՛ս Сделки, представительство, исковая давность: постатейный комментарий к статьям 153–208 Гражданского кодекса Российской Федерации, отв. ред. **А. Г. Карапетов**, комментарии к статье 163, пунктам 1, 3, 4 статьи 165, статьям 171, 172, 175–177, 202–205 ГК РФ – **Павлов А. А.**, М., Изд. М-Логос, 2018, 1264 с., էջեր 1227-1228:

մապիսի են: Այնուամենայնիվ, փորձ է արվել առանձնացնել այն հիմնական հատկանիշները կամ չափորոշիչները, որոնց պետք է բավարարի գործողությունը պարտքի ճանաչում որակվելու համար: Սակայն, այդ չափանիշները բացահայտելու համար հարկ է նախ պարզել նման գործողությունների իրավական բնույթը:

Նախ նշենք, որ գործող օրենսդրության տեսանկյունից պարտքի ճանաչումն ունի միայն մեկ նյութաիրավական հետևանք, այն է՝ հայցային վաղեմության ժամկետի հոսքի ընդհատումը[1]:

Ուստի պարտքի ճանաչման իրավական բնույթի հետ կապված հարցին պատասխանելու համար պետք է հասկանալ նման գործողություններ կատարող անձի կամքի ուղղվածության և համապատասխան իրավական հետևանքի հարաբերակցությունը: Իրավաբանական գրականությունում տարբեր տեսակետներ են արտահայտվել պարտքի ճանաչումը վկայող գործողությունների իրավաբանական բնույթի՝ իրավաբանական փաստ լինել-չլինելու, իրավաբանական փաստի այս կամ այն տեսակին պատկանելու վերաբերյալ[2]: Ընդունելի համարելով գերակշռող այն մոտեցումը, որ պարտքի ճանաչումը վկայող գործողությունն ինքին՝ անկախ այդպիսի

---

[1] Տե՛ս **Марьянков А. Н.**, Признание долга как правовой феномен, Ленинградский юридический журнал, Санкт-Петербург, Номер: 3 (17), 2009, էջ 83:

[2] Պարտքի ճանաչումն իրավաբանական արարք էին դիտում Յու. Կ. Տոլստոյը (տե՛ս **Толстой Ю. К.**, К теории правоотношения, монография, Л., Изд. Ленинградского университета, 1959, 88 с., http://window.edu.ru/catalog/pdf2txt/611/37611/14684?p_page=2, էջ 16), Մ. Մ. Ագարկովը (տե՛ս **Агарков М. М.**, Избранные труды по гражданскому праву. В 2 т. Т. 1: Социальная ценность частного права и отдельных институтов общей части гражданского права. – М.: Статут, 2012. – 428 с., էջ 222), Օ. Ա. Կրասավչիկովը (տե՛ս **Красавчиков О.А.**, Юридические факты в советском гражданском праве, монография, М., Государственное издательство юридической литературы, 1958, 181 с., էջ 154), Ա. Պ. Սերգեևը, (տե՛ս **Сергеев А. П.** (ред.) Гражданское право. Учебник. В 3-х томах. Том 1, М.: РГ-Пресс, 2013, 1006 с., համապատասխան գլխի հեղինակ՝ Ա. Պ. Սերգեև, էջ 580-581), Ա. Ն. Մարյանկովը (տե՛ս **Марьянков А. Н.**, Признание долга как правовой феномен, Ленинградский юридический журнал, Санкт-Петербург, Номер: 3 (17), 2009, էջ 88-89): Ճիշտ է, սա միակ մոտեցումը չէ. կարծիք է արտահայտվել նաև, որ պարտքի ճանաչումը միակողմանի գործարք է (տե՛ս **Алексеев С. С.**, Односторонние сделки в механизме гражданско-правового регулирования // Антология уральской цивилистики. 1925-1989: Сборник статей. - М.: "Статут", 2001. - 431 с. С. 54-68., http://www.civilista.ru/articles.php?id=68, էջ 58), իսկ Ե. Ա. Կրաշենինինիկովը դիտում է պարտքի ճանաչումը որպես գործարքանման գործողություն (տե՛ս Гражданское право / под ред. **А. П. Сергеева**, М., 2010. Т. 1., С. 434 (автор соответствующего параграфа — **Е. А. Крашенинников**)՝ հղումն ըստ **Бисултанов Я. Х.**, М., Действия, свидетельствующие о признании долга по ст. 203 ГК: теоретическая конструкция и соотношение с признанием долга по ст. 206 ГК, журнал «ЗАКОН», № 2 февраль 2018, էջ 178): Մի շարք հեղինակներ չեն համարում պարտքի ճանաչումը իրավաբանական փաստ: Տե՛ս **Кечекьян С. Ф.**, Правоотношения в социалистическом обществе. – М.: Издательство АН СССР, 1958, էջ 163-164: Մ. Ա. Ռոժկովան, ըստ էության, շեղվում է իրավաբանական փաստի ավանդական ընկալումից, որոնց թվում են նաև իրավաբանական արարքները (ինչպես, օրինակ, պարտքի ճանաչումը կամ հայց ներկայացնելը)՝ դրանց հետ կապվող իրավական հետևանքը չսահմանափակելով միայն իրավահարաբերությունների շարժով (դրա առաջացումը, փոփոխումը և դադարումը), այլ դրանում ներառելով նաև քաղաքացիական իրավասուբյեկտության դրսևորման հետևանքները, այդ թվում՝ քաղաքացիական իրավունքների և պարտականությունների իրականացումը, ինչպես նաև հետևանքները, որոնք վրա են հասնում խախտված կամ վիճարկվող սուբյեկտիվ քաղաքացիական իրավունքների պաշտպանությանն ուղղված գործողությունների իրականացման արդյունքում: Տե՛ս **Рожкова М. А.**, Недействительность дозволенных и недозволенных действий (юридический очерк), Недействительность в гражданском праве: проблемы, тенденции, практика, сборник статей, отв. ред. Рожкова М. А., М., Статут, 2006, 445 с., (Анализ современнгого права), էջ 53:

գործողությունն իրականացնող անձի կամքի ուղղվածությունից առաջացնում է իրավական հետևանք, պետք է նշել, որ դեռ ավելին, դեպքերի մեծամասնությունում պարտքը ճանաչող անձը չի իմանում իր ճանաչման նյութահիրավական հետևանքների մասին (հայցային վաղեմության հոսքի ընդհատում)[1]: Ընդ որում, պարտքի ճանաչումը գործարք չէ. այն ուղղված չէ քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ սահմանելուն, փոփոխելուն կամ դադարեցնելուն, այլ ուղղված է արդեն իսկ գոյություն ունեցող իրավահարաբերության առկայության հավաստմանը, իսկ իրավական հետևանքը ծագում է օրենսդրի, այլ ոչ թե անձի կամքով: Բացի այդ, վրա հասնող հետևանքը իր շահը պաշտպանելու իրավունքի ծագման ժամկետի հետաձգումն է, որը աղերսվում է իրավունակության սահմանափակմանը, ուստիև չի կարող գործարքի առարկա լինել:

Այսպիսով, պարտքի ճանաչում հանդիսացող գործողություն կատարելու փաստի հետ օրենքը կապում է համապատասխան իրավական հետևանք՝ անկախ անձի կամքի՝ տվյալ հետևանքն առաջացնելուն ուղղվածությունից:

Գրականության մեջ հայցային վաղեմության ընդհատման ֆենոմենը բացատրվում է չհակասող վարքագծի (venire contra factum proprium) դոկտրինայի կամ որ նույնն է՝ էստոպել սկզբունքի միջոցով. եթե անձը իր վարքագծով շրջանառության մասնակիցների մոտ ստեղծում է իր կամքի ուղղվածության երևութականություն, իրավակարգը պետք է ապահովի դրա ազդեցությամբ ողջամտորեն ձևավորված ակնկալիքների պաշտպանությունը և թույլ չտա տվյալ անձին հետագայում արհամարհել ստեղծված երևութականությունը և գործել դրան հակառակ[2]:

Այսինքն՝ պարտքի ճանաչումը դիտվում է որպես էստոպել սկզբունքի կամ հակասող վարքագծի անթույլատրելիության դոկտրինի մասնավոր դրսևորում[3], որի էությունն այն է, որ եթե անձը խոստում է տվել, որին մյուս կողմը ողջամտորեն ապավինելու հիմք է ունեցել և արել է դա ի վնաս իրեն, խոստում տվողի կողմից անբարեխղճություն կլինի հրաժարվել խոստումից[4]:

---

[1] Տե՛ս **Марьянков А. Н.**, Признание долга как правовой феномен, Ленинградский юридический журнал, Санкт-Петербург, Номер: 3 (17), 2009, էջ 83:

[2] Տե՛ս **Павлов А. А.**, Два вопроса о давности: о чем сказал и о чем умолчал Верховный Суд, Дата размещения статьи: 03.11.2016, http://xn----7sbbaj7auwnffhk.xn--p1ai/article/21168:

[3] Հարկ ենք համարում նշել, որ գրականության մեջ կարծիք է արտահայտվել առ այն, թե էստոպելի սկզբունքն այս պարագայում կիրառելի չէ, քանի որ այն ընդմիշտ վերացնում է այս կամ այն իրավունքն իրականացնելու հնարավորությունը, մինչդեռ պարտքի ճանաչումը միայն հետաձգում է դրա իրականացման պահը (Տե՛ս **Бисултанов Я. Х.**-М., Действия, свидетельствующие о признании долга по ст. 203 ГК: теоретическая конструкция и соотношение с признанием долга по ст. 206 ГК, ЖУРНАЛ «ЗАКОН», № 2 ФЕВРАЛЬ 2018, էջ 185): Սակայն, նման մոտեցումը ընդունելի չենք համարում. որոշակի դեպքերում և պայմաններում հնարավոր է նաև իրավունքի կասեցում (Տե՛ս **M. P. Thompson**, From Representation to Expectation: Estoppel as a Cause of Action, The Cambridge Law Journal, Vol. 42, No. 2 (Nov., 1983), pp. 257-278 (22 pages), էջեր 260-261):

[4] Տե՛ս **Liu Guoqing**, A Comparative Study Of The Doctrine Of Estoppel: A Civilian Contractarian Approach in China, Canberra Law Review Journal, Vol. 2010, No. 1, 2010, pp. 1-28 (28 pages), էջ 1, **Tom Baker, Kyle D. Logue wnd Jennifer Morinigo**, Liability Insurance, Waiver And Estoppel – Part 2, May 18, 2018, https://thealiadviser.org/liability-insurance/waiver-and-estoppel-part-2/: էստոպելի դեպքում կարևորվում է այն, թե ինչպես է պարտավոր անձի վարքն ընկալվել իրավազոր անձի կողմից, այսինքն՝ վարքագծի միջոցով էստոպելի դեպքում ուշադրության կենտրոնը այն անձի վրա է, ով պետք է գործեր, և ոչ թե այն կողմի, որին արգելվում է հակասող վարքագիծ դրսևորելը: Անձը կապված է նրանով, թե ինչպես է նրա վարքը ողջամտորեն ընկալել մյուս կողմը. պետք է հաստատվի վերջինիս կողմից վստահությունը/ հենվելը դրա վրա և դրության փոփոխությունն ի վնաս իրեն, բայց այս հանգամանքների իմացությունը մյուս անձի կողմից էական չէ: Տե՛ս **The Hon Justice K R Handley Ao**, Unconscionability In Estoppel: Triable Issue Or Foundational Principle?, Vol 7 No 2 (2007): QUT Law & Justice Journal, էջ 478:

Պատկերացում կազմելով պարտքի ճանաչման էության վերաբերյալ, հարկ է պարզել, թե ինչպիսին պետք է լինի այս կամ այն գործողությունը որպես պարտքի ճանաչում ***ողջամտորեն*** ընկալվելու համար:

Հայցային վաղեմության ժամկետի լրանալով անձի մոտ առաջանում է իր կոնտրագենտի անտարբերության, անփութության արդյունքում իր մոտ ձևավորված փաստացի դրության անփոփոխելիությունը պահպանելու շահ, որի պաշտպանությունն իրականացվում է հայցային վաղեմության ժամկետի վկայակոչմամբ: Եվ եթե անձը այդ ընթացքում կատարում է պարտքի ճանաչմանն ուղղված գործողություններ, նա խաթարում է շահի և համապատասխանաբար նաև պաշտպանության իրավունքի ձևավորման պրոցեսը, «փոփոխում» է իրավունքի ծագման համար անհրաժեշտ պայմանները (պարտքի ճանաչմամբ նա զրոյացնում է մինչ այդ պարտատիրոջ դրսևորած անտարբերության նշանակությունը, դադարեցնում է իր պաշտպանության իրավունքի ձևավորման արդեն իսկ սկսված գործընթացը և բերում սկզբնական փուլ):

Այսպիսով, կարծում ենք, որ գործողությունը կարող է ողջամտորեն ընկալվել որպես պարտքի ճանաչում միայն այն պարագայում, երբ պարտապանը հաստատապես հավաստում է իր պարտավորության առկայությունը և այն կատարելու պատրաստակամությունը, որն էլ վկայում է իր շահի ձևավորման գործընթացից «հրաժարվելու» մասին: Ընդ որում, կարծում ենք, կարևոր է, որպեսզի հստակ լինի վեճի բացակայությունը. այլապես չի վերանում շահի ձևավորման համար անհրաժեշտ պայմանը՝ անտարբերությունը, իսկ պարտատիրոջ առարկություններն էլ պարտապանի կատարած գործողություններն իր կողմից որպես պարտքի ճանաչում ընկալվելու մասին չեն կարող ողջամիտ համարվել:

Այսպես, պարտքի ճանաչում կարող է համարվել պարտապանի միայն հստակ արտահայտած և միանշանակ կամահայտնությունը[1]: Եթե պարտապանի գրավոր փաստաթղթերի կամ նրա կոնկլյուդենտ գործողությունների բովանդակությունը ակնհայտորեն չի վկայում, որ պարտապանը ճանաչում է իր պարտքը, բոլոր կասկածները պետք է մեկնաբանվեն հօգուտ նրա[2]: Այսինքն՝ պարտատերը կրում է իր անփութության ռիսկը:

Ընդ որում, պարտքի ճանաչումը չի կարող հասկացվել լայն իմաստով, դա կհակասի հայցային վաղեմության էությանը (միայն բավարար չափի հստակություն ունեցող գործողությունները կարող են որակվել պարտքի ճանաչում): Ուստի, կարևոր է, որ պարտքի ճանաչումը հարաբերակցվի կոնկրետ պարտավորության հետ[3]:

Այսպիսով, կարևոր է պարտքի ճանաչման բնույթի, բովանդակության վերաբերյալ հստակությունը, որի բացակայությունը կարող է գործնական խնդիրների հանգեցնել: Օրինակ՝ միմյանց հետ պարտավորական իրավահարաբերությունների մեջ գտնվող կողմերը կնքում են համաձայնություն, որով նախատեսված է որոշակի գումար փոխանցելու պարտականություն, որը հետագայում կողմերից մեկը բնորո-

---

[1] Տե՛ս **Сергеев А. П.** (ред.) Гражданское право. Учебник. В 3-х томах. Том 1, М.: РГ-Пресс, 2013. — 1006 с., էջ 581, Վճռաբեկ դատարանի՝ 2007 թվականի դեկտեմբերի 12-ի թիվ 3-1825(ՏՂ) քաղաքացիական գործով կայացված որոշումը, https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=41575:

[2] Տե՛ս **Сергеев А. П.** նշվ. աշխ., էջ 581:

[3] Դրա համար պետք է ֆիքսվեն այնպիսի տեղեկություններ, ինչպես կոնկրետ պարտավորությամբ պարտքի գումարը, հիմքերն ու առաջացման ժամանակահատվածը: Այնուամենայնիվ, երբեմն պարտապանի վարքագիծը վկայում է կոնկրետ պարտքի ճանաչման մասին նաև առանց խիստ դետալացման: Տե՛ս **Григорьев М., Гаспарян А.**, Перерыв течения срока давности: пять критериев, которые указывают на признание долга, Журнал "Арбитражная практика", https://www.vegaslex.ru/analytics/publications/interruption_of_period_of_limitation_five_criteria_which_indicate_the_acknowledgement_of_the_debt/:

շում է որպես պարտքի ճանաչում, իսկ մյուսը՝ որպես հրաժարագին:

Նման վիճակներից խուսափելու համար է, որ կարևորում ենք պարտքի ճանաչման վերաբերյալ հստակությունն ու հետագայում պարտավորությունն անելու կամքի արտահայտումը[1]:

Իսկ ինչ վերաբերում է պարտավորությունը կատարելու պատրաստակամությանը, ապա այն կարող է նաև ենթադրվել: Կարևորն այն է, որ հակառակը պնդելու հիմքեր չլինեն: Օրինակ՝ այդպիսի ենթադրության հիմք կարող է լինել փոխադարձ հաշվարկների ակտի ստորագրումը, որը կազմվում է վճարումները համաձայնեցնելու և մեկը մյուսի հանդեպ ունեցած պարտքերը պարզելու համար[2]:

Ուստի պարտքի ճանաչման գործողությունները պետք է հնարավորություն տան փաստել ոչ թե զուտ իրավահարաբերության առկայությունը, այլև դրա տարրերի հավաստումը և կամքը՝ անելու այն:

Սակայն, վերը նշված բոլոր պահանջներին բավարարող գործողությունը քննարկվող հոդվածի իմաստով պարտքի ճանաչում դիտվելու համար պետք է բավարարի նաև ժամկետային պայմանի:

Ավանդաբար համարվել է, որ քանի որ «պարտքի ճանաչումը վկայող գործողությունների» իրավական նշանակությունը վաղեմության ժամկետի հոսքն ընդհատելու մեջ է, համապատասխան արդյունքի համար անհրաժեշտ է, որ նման գործողությունները կատարված լինեն այդ ժամկետի սահմաններում[3], հակառակ դեպքում ընդհատում վրա չի հասնի վերջինիս լրացած լինելու կապակցությամբ[4]:

Բնականաբար, պարտքի ճանաչման՝ հայցային վաղեմության ժամկետն ***ընդհատող ազդեցության*** մասին կարելի է խոսել միայն այդ ժամկետի ընթացքում[5]: Սակայն, բացառված չէ, որ պարտքի ճանաչմանն ուղղված գործողություններ կատարվեն նաև հայցային վաղեմության ժամկետը լրանալուց հետո: Եվ հարց է ծագում՝

---

[1] Կամքի արտահայտման մասին տե՛ս **Бисултанов Я. Х.**, М., Действия, свидетельствующие о признании долга по ст. 203 ГК: теоретическая конструкция и соотношение с признанием долга по ст. 206 ГК, журнал «ЗАКОН», № 2 февраль 2018:

[2] Տե՛ս **Варушкин О.**, Акт сверки, https://e-kontur.ru/enquiry/278/akt-sverki:

[3] Տե՛ս Վերաքննիչ քաղաքացիական դատարանի՝ 2014 թվականի փետրվարի 28-ի թիվ ԵԿԴ/1634/02/11 քաղաքացիական գործով կայացված որոշումը:

[4] Տե՛ս Сделки, представительство, исковая давность: постатейный комментарий к статьям 153–208 Гражданского кодекса Российской Федерации, отв. ред. **А. Г. Карапетов,** комментарии к статье 163, пунктам 1, 3, 4 статьи 165, статьям 171, 172, 175–177, 202–205 ГК РФ - **Павлов А. А.**; М., Изд. М-Логос, 2018, 1264 с., էջ 1230, Տե՛ս Гражданское Право, учебник, переработанное и дополненно, том 1, под редакцией **А. П. Сергеева, Ю. К. Толстого**, М., 2005, էջ 373:
Տե՛ս ի թիվս այլնի նաև Վճռաբեկ դատարանի՝ 2017 թվականի ապրիլի 7-ի որոշումը թիվ ԱՎԴ3/0787/02/14 քաղաքացիական գործով, http://www.irtek.am/views/act.aspx?tid=90790&sc=p452, Վճռաբեկ դատարանի 2011 թվականի հուլիսի 29-ի թիվ ԱՎԴ1/0982/02/09 քաղաքացիական գործով կայացրած որոշումը. Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ հայցային վաղեմության ժամկետի ընդհատման հիմք կարող է հանդիսանալ պարտավոր անձի այն գործողությունը, որը կատարվել է հայցային վաղեմության ժամկետում: https://www.arlis.am/documentview.aspx?docID=71008:

[5] «Ընդհատել» եզրույթը վերաբերում է չավարտված գործողությունն ընդմիջելուն (տե՛ս ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, հատոր 2, Զ-Ծ, Գլխ. խմբ.՝ **Է. Բ. Աղայան**, ՀՍՍՀ ԳԱ, Հր. Աճառյանի անվ. լեզվի ին-տ., Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1972, էջ 98, http://www.nayiri.com/imagedDictionaryBrowser.jsp?dictionaryId=29&dt=HY_HY&query=%D5%A8%D5%B6%D5%A4%D5%B0%D5%A1%D5%BF%D5%BE%D5%A5%D5%AC), որևէ բան առանց վերջին՝ ավարտմանը հասցնելու դադարեցնելուն, կիսատ թողնելուն (տե՛ս Արդի հայերենի բացատրական բառարան, հատոր 1, Ա-Ջ, **Է. Բ. Աղայան**, «Հայաստան» հրատ., Երևան, 1976, էջ 402 http://www.nayiri.com/imagedDictionaryBrowser.jsp?dictionaryId=24&dt=HY_HY&query=%D5%A8%D5%B6%D5%A4%D5%B0%D5%A1%D5%BF%D5%BE%D5%A5%D5%AC):

ինչ իրավական հետևանք պետք է կապվի այդպիսի գործողությունների հետ:

Այսպես, եթե հայցային վաղեմության ժամկետի սահմաններում պարտքի ճանաչումը տեղի է ունենում այնպիսի պայմաններում, երբ դեռ ձևավորված չէ պարտապանի՝ իր շահը պաշտպանելու իրավունքը, ապա հայցային վաղեմության ժամկետը լրանալուց հետո այդ փաստի ուժով արդեն ձևավորվում են պարտապանի շահն ու համապատասխանաբար հայցային վաղեմության վկայակոչմամբ այն պաշտպանելու իրավունքը: Այսինքն՝ հայցային վաղեմության ժամկետը լրանալուց հետո անձի գործողություններն ուղղված պարտքի ճանաչմանը փաստացի պաշտպանության իրավունքից (մյուս կողմի անտարբերության արդյունքում ձևավորված շահի պաշտպանության) հրաժարում են ներկայացնում:

Ընդ որում, եթե հայցային վաղեմությունը չի վկայակոչվել, ապա հայցային վաղեմության հարց չի էլ ծագում, և կա իրավունքի հարկադիր պաշտպանության հնարավորություն՝ անկախ հայցային վաղեմությունը լրացած լինելու հանգամանքից (հայցային վաղեմության ժամկետը լրանալով իրավունքը չի դադարում): Պարտքը ճանաչելով՝ անձը ճանաչում է իր կոնտրագենտի պաշտպանության իրավունքը, և դրա իրավական հետևանքը ցանկացած պարագայում պետք է լինի հայցային վաղեմության ժամկետի վերսկսումը՝ անկախ նրանից՝ լրացած է այն, թե ոչ, չէ որ քանի դեռ ոչ ոք չի վկայակոչել հայցային վաղեմության ժամկետը, նշանակություն չունի՝ լրացած լինել-չլինելը, ավելին՝ անհնար է հաստատապես պնդել այդ փաստը:

Այսինքն՝ եթե հայցային վաղեմության ժամկետի վրա ազդեցության տեսանկյունից նշանակություն ենք տալիս պարտքի ճանաչման կատարման պահին, ստացվում է, որ պարտականություն ենք դնում պարտապանի վրա ամեն անգամ պարզել վաղեմության ժամկետի լրացած լինել-չլինելը, ինչը շատ հաճախ շատ դժվար է իրականացնել:

Մյուս կողմից անհասկանալի է պարտավորությունը կատարելուն ուղղված կամքի արտահայտման հետ տարբեր իրավական հետևանք կապելը՝ կախված կամքի արտահայտման ժամանակահատվածից:

Մինչդեռ, պրակտիկայում բացառված չէ հայցային վաղեմության ժամկետը լրանալուց հետո պարտքի ճանաչման իրականացումը, որպիսի գործողության համար օրենսդրական արգելք նախատեսելը ոչ մի կերպ չի կարող արդարացված համարվել: Իսկ նման գործողության թույլատրելիության պարագայում հայցային վաղեմության ժամկետի վրա ազդեցության տեսանկյունից իրավական նշանակություն չտալը կարող է գործնականում ավելի մեծ խնդիրների հանգեցնել, մասնավորապես՝ իրավազոր անձի իրավունքների լուրջ սահմանափակման՝ նկատի ունենալով հայցային վաղեմության ժամկետի հաշվարկի, ուստի նաև՝ լրացած լինելը որոշելու հետ կապված բարդությունները, որպիսի հարցում (հայցային վաղեմության ժամկետի ճիշտ հաշվարկման) հաճախ դժվարություններ են ունենում անգամ դատարանները:

Առկա կարգավորումն ինքնին զուրկ է հստակությունից. այն թույլ չի տալիս պարտատիրոջը հասկանալ, թե երբ կարող է անհոգություն դրսևորել, իսկ երբ՝ ոչ, իսկ պարտապանին էլ թույլ չի տալիս հասկանալ՝ ինչպիսի գործողություններից ձեռնպահ մնալ, եթե չի ցանկանում ընդունել պարտքը: Մինչդեռ, կողմերի իրավունքների նման լուրջ սահմանափակման ռիսկ պարունակող նորմը պետք է ունենա բավարար հստակություն, որպեսզի թույլ տա կողմերին կանխորոշել իրենց վարքագիծը, հասկանալ դրա հետևանքները:

Նշված հստակությունը կարևոր է նաև երրորդ անձանց տեսանկյունից. նրանց համար ևս պետք է հստակ լինի պարտքի ճանաչման առկայության կամ բացակայության փաստը՝ որոշելու՝ մտնում են այդ կողմերի հետ իրավահարաբերության մեջ, թե ոչ (նաև հասկանալու համար պարտքի փոխանցում կամ պահանջի զիջում իրականացվելու հնարավորությունը):

Նման իրավիճակը կարող է հանգեցնել փաստացի պարտքի ճանաչման կա-

ռուցակարգի չկիրառման:

Բացի այդ, հայցային վաղեմության ժամկետը լրանալուց հետո պարտքի ճանաչմանը իրավական նշանակություն չտալը խնդրահարույց է նաև հակասող վարքագծի անթույլատրելիության դոկտրինի համատեքստում: Հայցային վաղեմության ժամկետը լրանալուց հետո պարտքի ճանաչմանը նշանակություն չտալը փաստորեն կարող է ավելի շատ անորոշություն առաջացնել:

Հայցային վաղեմության ժամկետը լրանալուց հետո պարտքի ճանաչումը պաշտպանության իրավունքից հրաժարման վկայություն է, և ինչպես սեփականության իրավունքի դեպքում վարքագիծը կարող է վկայել իրավունքից հրաժարվելու մասին՝ հանգեցնելով մյուս կողմի մոտ ձևավորված շահերի պաշտպանությանը, համանման կերպով պարտքի ճանաչումը ակնկալիքներ է ձևավորում, որոնք պետք է պաշտպանել:

Այսպիսով, նախապատվությունը պետք է տրվի ազատորեն արտահայտված կամքին, որի սահմանափակման միակ չափանիշ, կարծում ենք, կարող է լինել հանրային շահի խախտման լուրջ վտանգը[1], որպիսին տվյալ դեպքում առկա չէ: Միևնույն ժամանակ, պարտքի ճանաչմանը հստակ պահանջներ ներկայացնելով՝ չի խախտվի նաև որոշակիության սկզբունքը[2]:

Հարկ է միայն հավելել, որ այստեղ առանձնակի կարևորություն է ստանում պարտավորությունը կատարելու կամքի արտահայտումը, հակառակ դեպքում ինքնին հայցային վաղեմության ժամկետը լրացած լինելու մասին վկայակոչումը կարող է դիտվել որպես պարտքի ճանաչում:

Ամփոփելով նշենք, որ կարևորում ենք հայցային վաղեմության ժամկետի ընթացքի վրա նաև այդ ժամկետը լրանալուց հետո կատարված պարտքի ճանաչման ազդեցությունը թույլատրող կառուցակարգի ներդնումը՝ նկատի ունենալով, որ անկախ այդպիսի գործողության կատարման ժամանակից այն նույնպիսի ակնկալիքներ է ձևավորում անձի մոտ և բացի այդ՝ նվազեցնում ռիսկերը: Ընդ որում նման ակնկալիքները ձևավորվում են պարտավորության նկատմամբ, որն ինքնին գույք է և կարող է ինքնուրույն շրջանառության օբյեկտ հանդիսանալ: Եվ այդ առումով հայցային վաղեմության ժամկետը լրանալուց հետո էլ կատարված պարտքի ճանաչմանը հայցային վաղեմության հոսքի վրա ազդող նշանակություն հաղորդելը, այն է՝ հայցային վաղեմության հոսքը նորից սկսելը, կարող է որոշ առումով նպաստել նաև քաղաքացիական շրջանառության հեշտացմանը՝ հնարավորություն ընձեռելով շրջանառության մասնակիցներին առանց մտավախության մտնել պարտքի զիջման կամ պահանջի փոխանցման հետ կապված իրավահարաբերությունների մեջ:

Այսպիսով, հաշվի առնելով վերոգրյալը, առաջարկում ենք ՔՕ 340-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «Հայցային վաղեմության ժամկետի հոսքը սկսվում է նորից՝ պարտավոր անձի կողմից պարտքի ճանաչումը վկայող գործողություններ կատարելով»:

---

[1] Տե՛ս **Бисултанов Я. Х.**, М., Действия, свидетельствующие о признании долга по ст. 203 ГК: теоретическая конструкция и соотношение с признанием долга по ст. 206 ГК, журнал «ЗАКОН», № 2 февраль 2018

[2] Ռուսաստանի քաղաքացիական օրենսգրքում 2015 թվականի մարտի 8-ի N 42-ФЗ օրենքով կատարված փոփոխությամբ նոր կանոն սահմանվեց, որի համաձայն, եթե հայցային վաղեմության ժամկետը լրանալուց հետո պարտապանը կամ այլ պարտավոր անձը գրավոր ձևով ճանաչում է իր պարտքը, հայցային վաղեմության հոսքը սկսում է նորից (206-րդ հոդված, մաս 2):

# ПЕРЕРЫВ ТЕЧЕНИЯ СРОКА ИСКОВОЙ ДАВНОСТИ СОВЕРШЕНИЕМ ОБЯЗАННЫМ ЛИЦОМ ДЕЙСТВИЙ, СВИДЕТЕЛЬСТВУЮЩИХ О ПРИЗНАНИИ ДОЛГА

**Кристине Габузян**
*Аспирант кафедры гражданского права ЕГУ*

В данной статье рассматривается вопрос о прерывании срока исковой давности путем совершения действий, подтверждающих признание долга. Обсуждаются основные критерии, которым должно соответствовать то или иное действие, чтобы считаться признанием долга, а отсутствие которых заключает в себе большие риски практических проблем. С этой точки зрения отмечается важность определенности и ясности признания долга, в частности, его характера и содержания, а также изъявления воли по исполнению обязательства в будущем.

Кроме того, для упрощения гражданского оборота, а также для обеспечения защиты ожиданий должника предлагается ввести регулирование, позволяющее возобновить течение срока исковой давности признанием долга, осуществленным после истечения срока исковой давности.

# INTERRUPTION OF THE RUNNING OF THE LIMITATION PERIOD BY PERFORMING ACTIONS EVIDENCING THE ACKNOWLEDGEMENT OF THE DEBT

**Kristine Gabuzyan**
*PhD Student at the YSU Chair of Civil Law*

The current article discusses the issue of interrupting the limitation period by performing actions that confirm the acknowledgement of the debt. The article discusses the main criteria that an action must meet in order to be considered an acknowledgment of debt and the absence of which carries great risks of practical problems. From this point of view, the importance of the certainty and clarity of the recognition of the debt, in particular, of its nature and content, as well as the expression of the will to fulfill the obligation in the future is noted.

In addition, in order to simplify civil circulation, as well as to ensure the protection of the debtor's expectations, it is proposed to introduce regulation, which allows to restart the running of the limitation period by the acknowledgement of the debt even after the expiration of the limitation period.

**Բանալի բառեր –** հայցային վաղեմություն, պարտքի ճանաչումը վկայող գործողություններ, էստոպել, հայցային վաղեմության ժամկետի հոսքի ընդհատում, վերսկսում
**Ключевые слова:** исковая давность, действия, подтверждающие признание долга, эстоппель, перерыв, возобновление течения срока исковой давности
**Key words:** limitation period, actions evidencing the acknowledgement of the debt, estoppel, interruption and restarting of the running of the limitation period